



Ա Պ Ա Բ Ա Տ

Թիւ Ե. — ՇՐՋԱՆ ԺԷ. 1884 ՏԱՐԻ ԺԷ. ՄԱՅԻՍ 31.

ԿՐՈՆԱԿԱՆ

ԱԽԾ ԵՒ ԿԱՐՈՒՂԻԿՈՍԱԿԱՆ ՔՆՏՔՈՒԹԻՒՆ.

Կ. Պոլսոյ Փունջ լրագրի տարւոյս Մարտի 3, թիւ 1879 թերթի
մէջ կարդացինք Կիլիկիոյ թեմականաց գրութիւնը առ Կ. Պոլսոյ
Հայոց Պատրիարքարանը, որով նոքա պատճառահներով կամենու-
մեն հրաժարուիլ Հայոց ընդհ. Հայրապետի ընտրութեան մաս-
նակցելուց. որ արժան համարուեց արտատպուել ամսագրիս մէջ
Պատրիարքարանի պատասխանով:

Պատճեն Սահյուղ Ռուբոյն.

Նորին Ա. Օծութեան Աստուածանուիր Հայրապետին մերոյ Տ. Տ.
Մկրտչի Ա. Սրբազնասուրբ . . . ի Հայոց և Եպիսկոպոսապետի մեծի
Տանն Կիլիկիոյ Ա. Աջոյն մատչիմք ի համբոյր խորին ակնածու-
թեամբ:

Վեհափառ Տէր:

Կիլիկեան Ա. Ամուսոյս Հայոց մարան և Ախողական ծառայքդ
րատ յանձնարարութեան Սրբազնագոյն Տեառնդ ընկալաք ի Յուն-

վարի 1884 ամի և 190 համարաւ գրեալ պատուական նամակն միաբանի Ս. Աթոռոյս և Բարձրաշնորհ Պատրիարքի Կ. Պօլսոյ Տ. Ներսէսի Սրբազն Արքեպիսկոպոսի, (որով Նորին Ամենապատիւ Սրբազնութիւնն առաջարկէր Աստուածարեալ վեհիդ անձամբ և թեմականօք Կիլիկիոյ մասնակցիլ ընտրութեան Ս. Կաթողիկոսի Սրարատեան Ս. Աթոռոյն) և յետ բազում խորհրդածութեանց և զինի մանրամասն խուզարկութեամբ քննելոյ զհին յիշատակարանս և արձանագրութիւնս Ս. Աթոռոյս,

Նկատելով՝ որ ի Կիլիկեան ընդհանրական Կաթողիկոսութենէ Սրարատեան Ս. Աթոռոյն Կաթուղիկոսութեան բաժանման թուականէն ի վեր ոչ ոք ի հոգելոյս Կաթուղիկոսաց սրբոյ Աթոռոյս մասնակցած է ընտրութեանց Ս. Կաթուղիկոսաց Սրարատեան Ս. Աթոռոյն, որպէս և ոչ Ս. Կաթուղիկոսունք նոյն Ս. Աթոռոյ մասնակցած են ընտրութեանց Ս. Կաթուղիկոսաց Ս. Աթոռոյս,

Նկատելով՝ որ ի 1866 ամի կատարեալ ընտրութեան Տ. Գէորգայ Դ. ի հանգուցեալ Կաթուղիկոսի ևս չեն մասնակցած ոչ Կաթուղիկոսութիւնն, ոչ Միաբանութիւնն և ոչ թեմականք Կիլիկիոյ, քանզի 30 Սեպտեմբերի 1865 ամի ի Տէր հանգուցեալ էր հոգելոյս նախորդն Զերդ Վեհութեան Տ. Կիրակոս Բ. Ս. Կաթուղիկոսն Կիլիկիոյ, և ի 1866 ամի միաբանութիւն Ս. Աթոռոյս ի վիճակս էր ցրուեալ, և ոչ գոյր աստ ի Ս. Աթոռոդ ոչ Կաթուղիկոսական փոխանորդ կամ տեղապահ, և ոչ իսկ Սինօդ կամ այլ պաշտօնական մարմին,

Հետեւապէս նկատելով որ, եթէ մինչ իսկ ասկէ առաջ Կիլիկեան Ս. Աթոռոս հանգերձ Վեհ. Գահակալովն և թեմականներովն իւրով մասնակցած լինի ընտրութեանց Ս. Կաթուղիկոսաց Սրարատեան Ս. Աթոռոյ, (որ ամեննեւին տեղի ունեցած չէ) այս անգամ պարսաւորեալ չէ մասնակցիլ ընտրութեան Ս. Կաթուղիկոսի Արարատեան Ս. Աթոռոյ, քանի որ նոյն Ս. Աթոռոն Կիլիկեան Ս. Աթոռոս անվաւեր, զԿաթուղիկոսութիւնն հետքեալ և հեշտաւ և զժողովուրդու Ձեւեւալ հրատարակած է կոնգակօք վերջին գահակալին իւրոյ, և ըստ այնմ ձեռնագրութեան Մաշտոց տպել տուած է, և ի նոյն վերջին հանգուցեալ Կաթուղիկոսէ ձեռնագրեալ եսլիսկոպոսներէն ըստ այնմ երգմնատիր առած է, և ցարդ զղջալով իւր այն աղօրէն հրատարակութիւնները յետս կոչուած չէ, և քանի որ Պօլսոյ Ազգ. Պատրիարքարանն ալ ամենայն անտարբե-

ըութեամբ լրութիւն պահած է ի քաջալերութիւն Արարատեան Աթուոյ և ի նախատինս Կիլիկեան Աթուոյս,

Միաձայն հաւանութեամբ որոշեցինք որ Ա. Աթուոս հանդերձ իւր Վ. Գահակալովն և թեմականներովն բնաւ չը մասնակցի ընտրութեան Ա. Կաթողիկոսի Արարատեան Ա. Աթուոյ, որպէս զի Ա. Աթուոս Կիլիկեան իւր այդ ոչ—մասնակցութեամբն թէ առ ինքն առաջարկեալ նորաձեռութիւնը հերքած և մերժած լինի առ ի պաշտպանութիւն իւրոյ վեցգարեան հնաւանդ դրութեան, և թէ ըստ վերայիշելոյն ապօրէն հրատարակութեամբ և արարքով Հայաստանեայց Առաքելական Ա. Եկեղեցւոյ օրինաց հակառակ գործող Արարատեան Աթուին զգուշութեան և պարտուց ու իրաւանց ճանաչման դաս մը տուած լինի, որպէս երբեմն ըրած էր հոգելոյս Կաթողիկոսն Կիլիկիոյ Տ. Ախմէոն առ հոգելոյս Կաթողիկոսն Արարատայ Տ. Փելիսալոս ուղղելով պաշտօնական գիր մը:

Արդ, ամենայն պատկառանք մաստացանելով առ Զերդ Աստուածընտիր վեհութիւն զսոյն տեղեկագիր որոշման Ախմօդի Կիլիկեան Արքոյ Աթուոյս Հայոց,

Մնամբ ամենախոնարհ ծառայք Աստուածարեալ Տեառնդ մերոյ

Ատենադպիր

Ատենապետ

Կաթողիկոսական քարտուղար

Կաթողիկոսական Փոխ.

Մէրտէն Եղիսաբետոս Վ. Եհանապէտուան

Կիլրէն Եղիսաբետոս Բէտեղիշտան

Առաջնորդ և Վանահայր Հաճընոյ

Պէտրոս Եղիսաբետոս

Առաջնորդ և Վանահայր Աւլիոյ

Կուրտուտ Եղիսաբետոս

Առաջնորդ Տեղ. Անտիօքոյ և Բօայանի

Յակոբ Օ. Վարդապէտ Լիճնիւլեան

Միաբան Ա. Աթուոյս

Պէտրոս Օ. Վարդապէտ Ո. Արքիւլեան

Միաբան Ա. Աթուոյս

Սահմէ Օ. Վարդապէտ Զօլաքեան

Միաբան Ա. Աթուոյս

Օհան Վարդապէտ Ո. Զարդահեան

Յակոբ Վահանոյ Գրէդորեան

Մակուտ Վահանոյ Լիճօվճեւան

Աւետիս Վահանոյ Ա. Ա. Մէրտէնան

Յարութիւն Վահանոյ Գէլինեան

Ե 5 Փելտրվարի 1884 ամի

Ե Ա. Աթուոս Կիլիկիոյ, որ ի Սիս

Պ Ա Տ Ճ Ե Ն

Կանոնիկ հասական Յանշետաղը կազմանէ արուածա պարագաներով։

Ամենապատիւ Սրբազն Եղբայր ի Քրիստոս :

Ընկալաք զգիր Ամենապատիւ Սրբազնութեան Զերոյ որ ի 5 ամսեանն փետրուարի, ի պատասխանի պաշտօնագրոյն մերոյ որ ի 1 Յունուարի այսր ամի, ընդ նմին և զտեղեկագիր վանական ժողովոյ Աթոռուոյդ, որով մերժէ նա զմանակցութիւն իւր յընտրութիւն Հայրապեսի ամենայն Հայոց :

Զարմանամք ապաքէն զի զվանականդ զայդ ժողով անուանէք Աչնօք Սընօյ Ալուսոյ, զայս առաջին նուագ լուեալ զայդ անուն յԱթոռն Սոոյ, անձանօթ էր այդ ոչ միայն առ նախնիս, այլ և առ Զեօք, յընթացս երեքտասանամեայ աթոռակալութեան Զերոյ ոչ ծանուցաւ Պատրիարքարանիս, և ոչ իսկ յերկամեայ քնակութեան ձերում ի մայրաքազաքլո խօսեցաւ ընդ մեզ զայդմանէ : Մոնաւանդ թէ ի ծրագրի անդ՝ զոր ընկալաւ, և ձեռնազրեաց Զերդ Ամենապատութիւն ի 22 տամեանն Հոկտեմբերի 1881 ամի ի կոստանդնուպոլիս, ի յօդուածս Ժ. ընդունի վանական ժողով և եթ յաթոռանիստ վանս Սոոյ :

Գիտասոյէ ուրեմն Ամենապատութիւն Զեր և միաբանութիւն Աթոռուոյդ՝ զի ազգն Համօրէն՝ որպէս և Կեդրոնական Վարչութիւն Հայոց Տաճկաստանեաց ճանաչեն զժողովդ վանական ժողով անուամք :

Արդ՝ զոյն այդ ժողով՝ «յետ բազում» խորհրդածութեանց և զինի մանրամասն խուզարկութեամբ քննելոյ զհին յիշատակարանս և արձանագրութիւնո Ա. Աթոռոյն որպէս ասէ, տեղեկագրէ առ Զերդ Ամենապատութիւն զպրտճառ մերժելոյ զմանակցութիւն Աթոռոյն Կիլիկիոյ յընտրութիւն Հայրապետին ամենայն Հայոց, և ի տեղեկագրութեան յանդ խրում՝ յետ անուանելոյ զինքն Ախնօդ՝ անուանէ և զիաթուղիկոսութիւնն Կիլիկիոյ ընդհանրական Կաթողիկոսութիւն, որ թէ առ նախնեօք և թէ առ մեօք այդ տիտղոս ընդհանրութեան չէ տուեալ առ Աթոռն Սոոյ :

Յայտ է ի պատմութենէ ազգիս, թէ ի քաղաքական հանգամանաց ազգին բոնազատեալ՝ թէպէտ գահակալք Սրբոյ Աթոռոյն Կջմիածնի յածեցան ի զանազան տեղիս, այլ՝ ազգն Հայոց զգա-

հակալն զայնոսիկ համարեցաւ միշտ իբրև զգահակալ կաթողիկոսունք իսկ համարեցան զանձինս գահակալս Մայր Աթոռոյ Ա. Էջմիածնի, և ոչ եթէ Դընայ, Անւոյ, Հռոմելլայ, Սոյ, և այլն: Ահա, օրինակ իմն, Տէր Յակոբ Գ. որ ել ի գահ Հայրապետութեան ի Սիս, յամի 1406 ի վերտառութեան կոնդակի իւրոյ որ առ ժողովուրդ Հայոց Վասպուրական գաւառի, անուանէ զանձն իւր կաթուղիկոս Վաղարշապատու, ասելով «Այս մեր գիր հոգեորական բարձր հրամանի հաստատութիւն է, և օրհնութիւն է Յակոբայ ծառայի ծառայիցն Յիսուսի Քրիստոսի Աստուծոյ Տեառն մերոյ, շնորհօք և ողորմութեամբ Նորին կաթուղիկոս ամենայն Հայկաղնեայց հանուրց և Վաղարշապատու»: «Նմանապէս Տէր Կոստանդին Ե-րդ. որ ամբարձաւ յաթոռ Հայրապետութեան ամենայն Հայոց ի Սիս, յամի 1430, ի միում կոնդակայն իւրոց խոստովանի գոլ զանձն կաթուղիկոս Վաղարշապատու, յասելն «Կոստանդին ծառայ ծառայից Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, ողորմութեամբն Աստուծոյ Կաթուղիկոս Վաղարշապատու» և այլն: Քանզի երանելի Հայրապետքն զիտելով գիտէին թէ պանդուխաք են ուր և գըտանիցին, որպէս և մեծ Հայրապետն ամենայն Հայոց Սուրբն Ներսէս Շնորհալի հառաջէր ի Հռոմելլայ ասելով, . . . զինչ արարից զի ապրեացի անձն իմ յահագնալուր սպառնալեաց աստի՝ տարակուսելի է ինձ. քանզի շրջիլ առ ամենեսեան ընդ ամենայն կողմունս աշխարհի և քարոզել զբանն Աստուծոյ՝ անկարելի է: Եւ քաղաք թագաւորութեան և բազմաժողով ոչ գոյ ազգի մերում որպէս, զի անդանօք նոտելով յաթոռ Հայրապետութեան և վարդապետութեան ուսուցանէաք ժողովրդեան մերոյ զԱստուծածային պատուիրանս: Այլ եմք ի՞շտ զայտեան յարուրդաց և է շնորհակալութեալ է առշանչան յայս է Հայութական բնակելով: . . . »

Զայս այսպէս հաստատեն ամենայն պատմական աւանդութիւնք. այսպէս գիտէ և ազգն համօրէն: Կաթուղիկոսունք Սոյ ի 1441 թուականէ անտի ի փոխադրութենէ ասեմք Հայրապետական Աթոռույն և Գահակալացն ի բուն աթոռատեղի Հայրապետութեան ամենայն Հայոց ի Կաթուղիկէ Տաճարն ի Ս. Էջմիածին, որ ճարտարապետեալն է մատամք Միածնի բանին, և ուր զաթոռ Հայրապետութեան հաստատեաց Առաքելասարաս Հայրն մեր Ս. Գրիգոր Լուսաւորիչ, անտի և այսր ասեմք Կաթուղիկոսունք Սոյ կա-

զին մնացին միայն ի մասնական հովուութեան Հայոց վիճակին Կիլիկիոյ՝ կրելով զանուն Կաթուղիկոսի Սոյ և Եթ:

Եւ իւլաղնջուց անտի ժամանակաց զահակալք Աթոռոյն Կիլիկիոյ ընդունէին զակումն թագաւորական ձեռամբ Պատրիարքացն Կոստանդնուպօլսոյ, նոյն և զի՞՞ում Պատրիարքարանի ի վաւերացումն պաշտամանն, որպէս հաւաստի առնեն մնացորդք գրութեանց նոյտ պահեալք ի դիւանո Պատրիարքարանիս, և բանք հրաժարաւակացն արքունիք: Ահա. օրինակ իմն, ի թուականիս Հայոց ՌՄՀԱ (1822) և ի Հոկտեմբերի 5 թեմականք Կիլիկիոյ, Անտիոքայ, Բերիոյ, և Քիլիսու, Երկոքումք թղթովք խրեանց սառագրեալք յեպիսկոպոս Առաջնորդաց և ի վարդապետաց և քահանայից և ի Սարկաւագաց և յիշխանաց և յերեցփոխանաց, խնդրեն յԱրժանայիշատակ Նախորդէն մերմէ ի Տէր Պօղոս Սրբազն Պատրիարքէ՝ այսու բանիւք... «սակս առ Աստուածփոխման Սրբազնն Հօր մեր հոգեւորի Աստուածընտիր Կիրակոս Կաթողիկոսին, դիմեմք արտասուաթոր աչօք և հայցեմք մեծաւ յուսով զի Հայութեացն մեզ հովիւ հոգեւոր և այցելու զյաջորդն Նորին զՏէր Եփրեմ Աստուածարեալ արքեպիսկոպոսն զգէտն Բերիոյ զընտրեալն յԱստուծոյ և ի մերոյս հասարակութենէ յաթուականաց և ի Վիճակաւորացու:... Հանելով զհամանադրութիւնն արդայտիան, և պարհեւելով Հինոդական Քոյդ Գերապատիւ Մեծի Տէրութեան...» ի միւսում նամակի ևս զրեն այսպէս. «ինողրեմք աղերսանօք, զի Հայութեացն մեզ հովիւ և Տէր հոգեւոր (Զեփրեմ Սրբեպիսկոպոսն) արքունուսաւ հրամանաւ, և բարձու իշխանութեանդ կոնդակաւ, հաճութեամք բոլոր մեծայարգ և Աստուծով զօրացեալ պերճափայլ իշխանաց, » և այլն:

Տէր Միքայէլ Բ. թդ. Կաթողիկոս Սոյ ի գրութեան խրում որ յ 12 ամսեանն նոյեմբերի 1848 ամի, ինքնաբարեբար խոսանվանի զանձն լինել ընդ իրաւասութեամբ Պատրիարքութեան Կոստանդնուպօլսոյ, որ Փոխանորդն է ի Տաճկաստան Հայրապետին ամենայն Հայոց, և այսպէս ասէ. «Միայն թէ գոյի ոմն ի մէջ Աթոռոյու Կաթողիկոս անուածք ի ձեռնազրութիւն եպիսկոպոսի, և ի յօրհնութիւն Սրբոյ Միւռոնի, և նոյն Կաթուղիկոսն բաւականացի խր ամսականաւն միայն, ըստ հաճոյից բարեկարգ ժողովոց (Կ. Պօլոց):

Սակայն յաջորդն նորա և նախորդն ձեր Տէր Կիրակոս Բ. բդ. առաւելագոյն և ս վառեալ ոգւով ճշմարտութեան և շահուց Եկեղեցւոյ Հայաստանեայց կնքէ կանոն և գիր գաշնազրութեան մետասան յօդուածով յամի Տեսան 1856 ի հնգետասան աւուր ամսեանն Յուլիսի, որոյ մետասաներորդ վերջին յօդուածն է այսպէս. « Որովհետեւ Միածին Որդին բանն Աստուած էջ ի յԱրարատ ոսկի ուռամբն հարկանելով զերկիր նշանագրեաց տեղին լուսանկար զառաջին եկեղեցին ազգիս Հայոց՝ ուստի ստացաւ անուն Էջմիածին, վասն որոյ լրութիւն ազգիս Հայոց ըստ Աստուածային յայտարարութեան զնա ճանաչէ գլուխ և Մայր Աթոռ, թէեւ Գահակալք Նորին Լուսաւորչեան Ս. Աթոռոյ ի ժամանակս թագաւորութեան Հայոց աստանդական տարաշրջութեամբ երթային ընդ թագաւորի, և ի տեղիս տեղիս Հայրապետանոց հաստատեցին. բայց ի բառնիլ իսպառսպուռ թագաւորութեան Հայոց յամենայն տեղեաց՝ յատկացաւ Ս. Էջմիածին լինել Մայր Աթոռ և Հայրապետանոց պղծեալ լուս-նեան. զայս այսպէս ճանաչելով հղափառիմք Գահակալի Լուսաւորչեան Մայր Աթոռոյ Սրբազնակառար Կաթուղիկոսի ամենայն Հայոց և մնամ ընդ կամօք և ընդ հրամանաւ Նորին Վեհապետի յամենայն ժամ և յամենայն դէպս » :

Զայս քանիցս յայտարարեալ է ինձ նոյն արժանայիշատակ նախորդն Ձեր Տէր Կիրակոս, պատրաստ ցուցանելով զանձն ընդունելոյ դամենայն կարգադրութիւնս, զորս արասցէ Կեդրոնական Վարչութիւնն, և ընդունելով զնախագահութիւն Էջմիածնի: Որպէս և մեք յորժամ զառաջին եսվիսկոպոսական պատրագն մատուցանէաք ի Ս. Տաճարին Սոյ, սովոր զաշամբ յիշեցաք նախ զանուն Կաթուղիկոսի ամենայն Հայոց Տեսան Մատթէոսի յամին 1862, ի ներկայութեան անդ Տեսան Կիրակոսի, որոյ յիշատակն օրէնութեամբ եղիցի:

Ա. յսպէս և Ձերդ Սրբազնութիւն մինչ ի մայրաքազաքիս գտանէր, ընկալեալ զծրագիր բարեկարգութիւնն Կիլիկիոյ, որ առաջարկութեամբ և խորհրդակցութեամբ ձերով խմբագրեցաւ, ձեռնագրեալ գարձոյց առ մեզ առանձին զրութեամբ որ ի 26 ամսեանն Հոկտեմբերի 1881 ամի, յորում առէ, « Ազգային Վարչական Խորհրդոյ կողմանէ և մեր հաճութեամբ կազմեալ Յանձնաժողովին աշխատասիրած Կիլիկիոյ Կաթուղիկոսութեան վե-

րաբերեալ ծրագիրն զոր Զեր սրբազնութիւնն ղրկած էր մեզ, ընթերցաք, և հաւանելով ստորագրեցինք :

Եւ յառաջնումն յօդուածի ծրագրին այնորիկ զրեալ կայացապէս,

Յօդ. 1. — «Ս. Էջմիածնի Մայր Աթոռոյ Գահակալն լինելով Հայոց ընդհանրական Հայոցապէտն ամենայն Հայոց, որոյ ընտրութեան կը մասնակցին նաև Կվիիկիոյ թեմականք, Տանն Կվիիկիոյ Կաթողիկոսն ճանցած է, կը ճանչնայ և պիտի ճանչնայ նորա Գերագահութիւնը» :

Եւ յերկրորդում յօդուածի վերստին յիշատակեալ է Հայրապետն ամենայն Հայոց և գերագահութիւն նորա: Ապա ուրեմն և ձերդ Սրբազնութիւն ի 22 և ի 26 ամսեանն Հոկտեմբերի 1881 ամի հաւանութեամբ իւրով և կրկնակի ձեռնագրաւ ծանեաւ եթէ Կաթողիկոսն որ ի Ս. Էջմիածնին, է «միայն ընդհանրական Հայրապետն ամենայն Հայոց :

Եւ ըստ այսմ՝ յայնմ հետէ և այսր բարձան ամենայն հեշտակամ հետագետ բանիք անախորժք, մինչդեռ բանքդ այդոքիք ասացեալ են յառաջ քան զստորագրութիւն Զեր զայս, վասն որոյ աւելորդ իմն էր յիշատակել զբանսն զայնոսիկ, իբրու թէ նոր ինչ իցեն, և թէ Ազգին հաւան գտանիցի ընդ այդ:

Զիանը ուրեմն, վանականդ ժողով մտաբերէ այսօր հանել հերձուած հակառակելով ոչ միայն բազմազարեան աղքային ընդհանուր կամաց և սպատմական աւանդութեանց, այլ և կամաց նախորդաց Զերոց, և որ ցաւալին ևս է հակառակելով և Զերումդ իսկ ձեռնագրի ի նախայիշատակեալ ծրագրին, զոր յետ կնքելոյ մատուցիք զսուրբ Պատարագն յեկեղեցւոջ Ս. Երրորդութեան որ ի Կոստանդնուպոլիս, և անդ առաջի խուռնլնթաց ժողովրդեան՝ որ եկեալ էր լսել զհանդիսաւոր խոստովանութիւն Զեր, քրիստոնէական ոգլով քարոզեցիք զնթոռն Սրբոյ Էջմիածնի լինիլ Առաքելական Աթոռ Հայաստանեայց եկեղեցւոյ: Եւ ի պահու աղօթից յիշատակութեան ահաւոր խորհրդոյ անդ, յիշատակեցիք զՏէր Գէորգ Կաթողիկոսն (որ կենդանի էր յայնժամ) իբրև ընդհանրական Կաթողիկոս ամենայն Հայոց: Սոյն այս յիշատակութիւն եղեալ էր յառաջագոյն համեդիսապէս յաթոռանիստ Տաճարին Սոյց առաջի Զեր ի Սուրբ Պատարագին յաւուր օծման Զերոյ ի Կաթողիկոսութիւն Տանն Կվիիկիոյ:

Եւ յառաջ քանի զայս ամենայն, յաւուր ընդունելոյ Զեր զձեռնադրութիւն Եպիսկոպոսական աստիճանի ի Մայր Աթոռի անդ Ա. Էջմիածնի, ուխտեալ է Զեր, թողեալ և ձեռնագիր ընդունելոյ զԳահակալսն Նորին լինիլ «Եպիսկոպոսապետ և Ծայրագոյն Պատրիարք Համազգուկան նախամեծար Աթոռոյ Արարատեան Մայր Եկեղեցւոյ Սրբոյ Կաթուղիկէ Էջմիածնի և Կաթուղիկոս ամենայն Հայոց»; Զսոյն Զեր ուխտ ի գործ Եղեալ է Զեր անտի և առյապա ի բազմամեայ Եպիսկոպոսութեան Զերում, յիշատակելով միշտ ի Սուրբ Պատարագի զանուն ընդհանրական Հայրապետի ամենայն Հայոց; Ահա, ցայսօր Սրբազնութիւն Զեր ստորագրէ իրեւ միաբան Եպիսկոպոս Ա. Էջմիածնի: Եթէ միաբան էք, որպէս և էքդ, ապա ուրեմն պարտիք Հաւատարիմ մնալ Ուխտի Զերում, և անվիթար պահպանել զխոստումն Զեր, ճանաչելով զԳահակալսն Արարատեան Ա. Աթոռոյ ընդհանրական Կաթուղիկոս ամենայն Հայոց:

Յասացելոցս աստի քաջայայտ երեխ՝ թէ սիսալ է մեծապէս վանականդ ժողով ոչ միայն ընդհանրական Կաթուղիկոսութիւն անուանելով զԱթոռն Սոյ, այլ և Համարձակելովն ասել, թէ Ա. Աթոռն Արարատեան բաժանեալ իցէ ի Սոյ, զորոյ Աթոռն պահեաց և պահէ ցարդ Ազգն իրեւ աւանդ իմն այնպիսի Ժամանակաց և պարագայից, զորս ոչ ստեղծ ինքնս և սակայն պատկառ կայ այնոցիկ հեռատես շրջահայեցութեամբ և եթ: Այլ Ազգն կամեցաւ և կամի զի և Աթոռն Սոյ ոչ զիրաւունս և եթ այլ և զպաշտիս իւր գիտասցէ, քանզի այսու միայն մարթիցի պահպանել զներդաշնակութիւն և զմիութիւն Հայաստանեայց Եկեղեցւոյ:

Վանական ժողով ի տեղեկագրի իւրում ասէ, «Ոչ ոք ի հոգելոյս Կաթողիկոսաց Սրբոյ Աթոռոյս մասնակցած է ընտրութեանց Ա. Կաթողիկոսաց Արարատեան Ա. Աթոռոյ . . . ի 1866 ամի կատարեալ ընտրութեան Տ. Գէորգայ Դ. ի հանգուցեալ Կաթուղիկոսի ևս չեն մասնակցած ոչ Կաթուղիկոսութիւնն, ոչ Միաբանութիւնն և ոչ թեմականք Կիլիկիոյ. քանզի յ30 Սեպտեմբերի 1865 ամի ի Տէր հանգուցեալ էր հոգելոյս նախորդն Զերդ Վեհութեան Տ. Կիրակոս Բ. Ա. Կաթուղիկոսն կիլիկիոյ, և ի 1866 ամի Միաբանութիւնն Ա. Աթոռոյս ի վիճակս էր ցրուեալ, և ոչ զոյր աստ ի Ա. Աթոռում՝ ոչ Կաթուղիկոսական Փոխանորդ կամ Տեղապահ, և ոչ իսկ Սինօդ կամ այլ պաշտօնական մարմին: »

Ցաւալի է զի Վանական ժողովդ անգիտանայ զքաղաքական հանգամանս վիճակին կիլիկիոյ յաւուրս բռնակալութեան Խօղան ողջ ցեղին, որ ապստամբեալ յօսմաննեան Պետութենէ ընդ լծով իւրով կաշկանդէր նաև զԱթոռն Սոյ, և առաւել եւս ընդ այն ցաւ է մեզ: զի Վանականդ ժողով և ընդ նմին Զերդ ամենասպատութիւն մոռանայ զի ընտրութիւն և հաստատութիւն Զեր յախոռ Սոյ՝ ոչ ըստ եղանակի ժամանակի Խօղանեանց կատարեցաւ, այլ ըստ վճռոյ Աղգային Երեսփոխանական ժողովոյ Հայոց Թուրքիոյ: Յուշ ածեմ Զեղ զի յընտրութիւն Հայրապետի ամենայն Հայոց յամի Տեառն 1866, ըստ որոշման Աղգային Երեսփոխանական ժողովոյ, Աթոռն կիլիկիոյ մասնակցեցաւ, և ես ինքն էի յայնժամ, որպէս գիտէք, Փոխանորդ Աթոռոյդ՝ ընտրեալ ի Կաթուղիկոսական Տեղապահէ Աթոռոյն, և յանուն վիճակիդ մասնակցեցայ յընտրութիւն Կաթուղիկոսին Ամենայն Հայոց թէ յեկեղեցական վիճակային ժողովի, և թէ յԱղգային Երեսփոխանական ընդհանուր ժողովի. զիանը ուրեմն իշխէ վանականդ ժողով գրել թէ՝ ի 1866 ամի կատարեալ ընտրութեան Տ. Գէորգայ Դի Հանգուցեալ Կաթուղիկոսի ևս չեն մասնակցած ոչ Կաթուղիկոսութիւնն, ոչ միարանութիւնն և ոչ թեմականք կիլիկիոյ: « Եւ զիանը մանաւանդ իշխէ ևս ասել թէ՝ միաձայն հաւանութեամբն որոշեցինք որ Ա. Աթոռսիւր Գահակալովն և Թեմականներովն քնառ քմասնակցի ընտրութեան Ա. Կաթուղիկոսի Արարատեան Ա. Աթոռոյն և զհրաւէր մեր ի մասնակցութիւն ընտրութեան նորոյ Հայրապետի ամենայն Հայոց « նորաձեռութիւն » կոչել:

Միթէ Տունն կիլիկիոյ չիցէ մասն Հայաստանեայց Եկեղեցւոյ և Աղգի: Միթէ ուրանին ազգ իցէ Տունն կիլիկիոյ և Եկեղեցին: Ցանդգնիցի վանականդ ժողով ասել թէ՝ Աթոռն Սոյ բաժանեալ իցէ յաղութենէ և յԵկեղեցւոյ Հայաստանեայց: Ուրեմն առ ի պահել զմիութիւն Եկեղեցւոյ և զներգաշնակութիւն սիրոյ յամենայնի ըստ օրինակին 1866 ամի, և ըստ վճռոյ աղգային Ընդհանուր ժողովոյ թէ՝ Ամենապատիւ Սրբազնութիւն Զեր և թէ Սրբազն Եպիսկոպոսունք և Առաջնորդք և Վանահարք որոց միարանութիւն իցէ վիճակիս, որք անցեալ են անխոտիր ընդհանուր ցուցակի ընտրելեաց ի Կաթուղիկոսութիւն Ամենայն Հայոց, որպէս թեմական ժողովուրդք Աթոռոյդ Երեսփոխանօքն իւրեանց յԱղգային ժողովի մասնակցին ի նոյն ընտրութիւն: Վանզի վիճակք

Կիլիկիոյ և Աթոռ նորա ոչ կազմեն բնաւ անջատ ինչ թեմ կամ ուրոյն եկեղեցի, այլ մասն մարմնոյ են Սրբոյ եկեղեցւոյ Հայաստանեայց ընդ միոյ Գերագահ հովուապետաւ առաքելական Աթոռոյ Կաթողիկէ Սրբոյ էջմիածնի:

Այս իրաւունք են Զեր և այս պարտիք, յորմէ խուսափիլ քրիստով որով և իցէ պատճառանօք և վարկապարազի գրութեամք վանական ժողովոյդ։ Գիտէ քաջ Զերդ Սրբազնութիւն զկարգս և զկանոնս սրբոյ եկեղեցւոյ Հայաստանեայց և զպիտոյս նորա բազմազանս ի ժամանակի աստ յայսմիկ, վասն որոյ պարտք են մեզ ամենեցուն հաստատուն պահել զկատ միութեան սրբոյ եկեղեցւոյս, և ի բաց թողուլ զամենայն հակառաբանութիւնս որ ի խաւար ժամանակաց և ի քաղաքական գժիսեմ պարագայից ծնունդ տուեալ են։ Յեմականք Կիլիկիոյ և Աթոռ նորա յաջո մեր ամենեցուն են օրդիք առաքելական և սուրբ եկեղեցւոյ Հայաստանեայց, ուստի և յայսմ բարեպատեհ առթի մասնակցութիւն Զեր յընտրութիւն Հայրապետին ամենայն Հայոց բարձցէ զամենայն տարապարտ կարծիս և կասկածանս. և զօրացուսցէ զեկեղեցին Հայաստանեայց ընդդիմամարտ լինել ամենայն չարեաց որ ի ներքուստ և յարտաքուստ, և պահել ամրակուռ ընդ հովանեաւ իւրով զօրդիս իւր հաւատարիմն վտարանգիս ի սփիւռս աշխարհի։

Սրբ՝ Սրբազն եղբայր, մի յիշէք զբանս և զգիրս՝ որք արծարծեն զբոց կամ զհուր հակառակութեան, և ընդլայնեն զխրամ անջատման. գրուածք և ընթացք կրիւք լի՛ մատուցանեն հանապահ փաստո անարդարանակի հակառակութեանց, ուստի ի բաց թողեալ զայսպիսիս ամենայն, մեք ամենեքեան աղաչեսցուք զջէրն մեր Յիսուս Քրիստոս զմիակ գլուխն Սրբոյ Եկեղեցւոյ, զյուռցեալ հոգւտին խրով սրբով տացէ մեզ ամենեցուն զոգի սիրոյ և միութեան, և առաջնորդեսցէ մեզ յընտրութիւնս յայս, որպէս զի լիցի եկեղեցւոյն տեսանել զաւուրս բարեաց, շինութեան և պայծառութեան ի փառս իւր, որ է օրհնեալ յաւիտեան, ամէն։

Մնամք Ամեն. Սրբազնութեան Զերում աղօթակից Եղբայր
(Առաքաբարձրականական)
ՆԵՍԻՍ ԱՐՔԵ. ԱԱՐԺԱՊԵՏԵԱՆ

ի 6 Մարտի 1884

ի Պատրիարքարանի Հայոց Կ. Պոլիս

(ՀԱՅՀ)

Ամենապատիւ

Տ. Մկրտիչ Ա. Կաթողիկոս Տանն Կիլիկիոյ Ի Սիս